

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՍԱԹԵՆԻԿ ԷՄԻԼԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐԻԳ ԱՎԱԳՅԱՆԻ ԱՐՁԱԿԻ ԼԵԶՈՒՆ

**Ժ. 02. 01-«Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Վ.Գ. Համբարձումյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Յու. Ս. Ավետիսյան**

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ա. Վ. Գալստյան**

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. մայիսի 15-ին՝ ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ
Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության
019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. ապրիլի 10-ին:

Մասնագիտական խորհրդի բանասիրական գիտությունների
գիտքարտուղար՝ թեկնածու, դոցենտ **Ն. Մ. Սիմոնյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարի երկրորդ կեսի հայ նորագույն գրականության արձակագիրներից մեկի՝ Աբիգ Ավագյանի արձակի լեզվի ուսումնասիրությանը: Վերջին տասնամյակների ընթացքում զգալի թվով աշխատանքներ են կատարվել գրողների երկերի լեզվաճանաչման ուսումնասիրության բնագավառում: Ա. Ավագյանի արձակն ուսումնասիրվել և գնահատվել է զուտ գրականագիտական դիտանկյունով: Նրա ստեղծագործությունների վերաբերյալ հանդիպում են գրականագիտական հոդվածներ¹, հեղինակի կենսագրությանը և գրական ժառանգությանը նվիրված մենագրություն², առանձին գրքեր³, որոնցում հատուկ բաժին է հատկացվել հեղինակի վեպերի և պատմվածքների բազմակողմանի ուսումնասիրությանը, թարգմանությանը: Սակայն մինչ օրս գրողի լեզուն⁴ դեռևս համակողմանի և ամբողջական քննության չի արժանացել, որով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Աշխատանքի նպատակը Ա. Ավագյանի արձակի լեզվի ամբողջական ուսումնասիրությունն է:

Աշխատանքի մեջ անդրադարձել ենք հետևյալ հիմնական խնդիրներին.

1. պարզել հայերենի բառապաշարի տարբեր շերտերի տեղն Ա. Ավագյանի արձակում, տալ դրանցից յուրաքանչյուրի բնութագիրն ու նշանակությունը հեղինակի խոսքարվեստում,

2. վեր հանել պատկերավորման և արտահայտչական այն միջոցները, որոնք նպաստել են հեղինակի գեղարվեստական ինքնատիպ լեզվամտածողության բացահայտմանը,

1 **Ա. Աղաբաբյան**, Երկու որակ, «Սովետական գրականություն» (ամսագիր), Ե., 1958, №8, **Ա. Բաղդասարյան**, Կյանքը փոքր կտավի վրա, «Գրական թերթ», Ե., 1962, №8, **Ա. Արզումանյան**, Թախձի և հավատի ուժը, «Գրական թերթ», Ե., 1967, №14, **Վ. Համբարձումյան**, Արձակագրի նոր գիրքը, «Սովետական գրականություն», Ե., 1979, №9, **Հր. Թամրազյան**, Արվեստի մի գեղեցիկ էջ, «Գրքերի աշխարհ», Ե., 1982, №5, **Լ. Արզումանյան**, Արդար կյանքի ջատագովությամբ, «Սովետական գրականություն», Ե., 1983, №1, **Դ. Հովհաննես**, Արի գնանք «աբջո» խմենք, «Ազգ», Ե., 2009, №12, Աբիգ Ավագյանի բնապաշտական հայացքները, «Հայագիտական հանդես», Ե., 2016, №3 (33):

2 **Մ. Թևանյան**, Աբիգ Ավագյան, Ե., 1999:

3 **Ա. Աղաբաբյան**, Սովետահայ գրականության պատմություն, հ. 2, Ե., 1965, **Ա. Արզումանյան**, Սովետահայ վեպը, գիրք 2, Ե., 1980, **Լ. Արզումանյան**, Արևելքը հայ արձակում, Ե., 1998, **Է. Բեգիջանյան**, کمان نیرنگ (Օրիսան) ժողովածու, Ե., 2012, **Ա. Նիկողոսյան**, 20-րդ դարի 2-րդ կեսի հայ պատմվածքի ընտրանի, Ե., 2012:

4 Ա. Ավագյանի երկերում տեղ գտած պարսկաբանություններին անդրադարձել է **Ա. Ղուկասյանը** «Պարսկաբանությունները Աբիգ Ավագյանի ստեղծագործություններում» հոդվածում: Տե՛ս «Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն», Գ պրակ, Ե., 2003:

3. ցույց տալ գրողի ստեղծագործություններում տեղ գտած ձևաբանական և շարահյուսական ինքնատիպ կառույցները՝ որպես համընդհանուր լեզվի դրսևորման անհատական ձևեր,

4. ցույց տալ իրանական միջավայրի ազդեցությունը հեղինակի լեզվամտածողության վրա,

5. կատարել բնագրերի համեմատական քննություն՝ ցույց տալով Ա. Ավագյանի ստեղծագործությունների վերամշակման և վերահրատարակման ժամանակ կատարված փոփոխությունները:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Ա. Ավագյանի արձակի լեզուն առաջին անգամ է համակողմանի և ամբողջական քննության ենթարկվում՝ ընդգրկելով բառապաշարի շերտերը, պատկերավորման և արտահայտչական միջոցները, ձևաբանական և շարահյուսական իրողությունները: Այս ամենից բացի, կատարվել է բնագրերի համեմատական քննություն՝ ցույց տալով այն փոփոխությունները, որոնք կրել են վերահրատարակված և վերամշակված ստեղծագործությունները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ ԵՎ ՄԵԹՈԴԸ: Որպես ուսումնասիրության փաստական նյութ օգտագործվել են հեղինակի «Վաղը» (1951), «Շիկացած հող» (1955), «Նազելի Դալարյան» (1959), «Հարված» (1978) վեպերը, «Պատմվածքներ» (1950), (1958), (1962), (1963), (1965) ժողովածուները, «Հարավային տենդ» (1971), (2002), «Եղել է, չի եղել» (1973), «Վերջին հանգրվան» (1982) ժողովածուները, «Մարդը անապատում» (1981), «Անեծք» (1985) պատմվածքները: Ուսումնասիրվել է հեղինակի արձակն ամբողջությամբ:

Աշխատանքը կատարվել է ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված մեթոդներով, հետազոտության եղանակներով, հիմնականում կիրառվել է ուսումնասիրության համաժամանակյա (նկարագրական-վերլուծական) մեթոդը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ: Աշխատանքում առաջ քաշված խնդիրներն ու լեզվական վերլուծությունները կարող են օգտակար լինել Ա. Ավագյանի խոսքարվեստով զբաղվողների, ինչպես նաև որևէ գրողի և գրական երկի լեզուն ուսումնասիրողների համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Աշխատանքի վերաբերյալ կան հրապարակումներ, որոնց ցուցակը ներկայացվում է սեղմագրի վերջում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, որոնք ունեն իրենց բաժինները և ենթագլուխները, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (գիտական, գեղարվեստական, մամուլ, համացանցային կայքէջեր), համառոտագրություններից, հավելվածից: Ատենախոսության ծավալը 163 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ անդրադարձ է կատարվում 20-րդ դարի երկրորդ կեսի հայ նորագույն գրականության արձակագիրներից մեկի՝ Աբիգ Ավագյանի կյանքի և գրական գործունեության որոշ դրվագների, տրվում է արձակ երկերի ընդհանուր բնութագիրը, ստեղծագործությունների լեզվական զարգացումը ժողովածուից ժողովածու, որոնց արժեքը պայմանավորված է հեղինակի գեղարվեստական մտածողության յուրահատկությամբ և անհատական ոճով:

Ատենախոսության **առաջին՝ «Ա. Ավագյանի արձակի բառային կազմը»**, **գլուխը** բաղկացած է երեք բաժնից: Առաջին բաժինը նվիրված է **բառապաշարի շերտերի** և դրանց ոճական առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Դիտարկված են համագործածական, ժողովրդախոսակցական, բարբառային, արևմտահայերեն բառերը, հնաբանությունները, նորաբանությունները, փոխառություններն ու օտարաբանությունները:

Ա. Ավագյանի բառապաշարի ուսումնասիրությունը սկսում ենք **համագործածական** բառերի քննությունից՝ ցույց տալով դրանց ոճական և իմաստային արժեքը գրողի լեզվում: Հեղինակը հիմնականում նախապատվությունը տալիս է համագործածական նշանակություն ունեցող բառերին, որոնք հայոց լեզվի բառապաշարի այն միջուկն են, որ դարերի ընթացքում պահպանվել և փոխանցվել են սերունդներին: Դրանք առօրյա հաղորդակցման համար կենսականորեն անհրաժեշտ բառեր են, որոնք գրողի ստեղծագործություններում ստանում են նոր հնչեղություն և բովանդակություն, ոճական որոշակի արժեք և նշանակություն: Օր.՝ «Այստեղ երանգները շատ են **աղաղակում**» (Վ, 158), «Երբ դու տրիբունայից խոսում էիր, մարդիկ ոչ թե լսում, այլ **խմում** էին քո խոսքերը» (Վ, 75): Առաջին նախադասության մեջ **աղաղակել** բառը գործածվել է «աչք ծակող, խայտաբղետ, ակնբախ, բացահայտ»⁵ իմաստով, իսկ երկրորդում նշանակում է՝ «տեսողությամբ ընդգրկել, կլանել»⁶: Վերջիններս, միախլումվելով բառապաշարի մյուս շերտերի բառերին, նպաստում են հեղինակի խոսքի ոճավորմանը՝ դարձնելով այն առավել պատկերավոր և տպավորիչ:

Ա. Ավագյանի արձակի լեզվին բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվի ներքոհիշյալ դրսևորումները, որոնց բաղադրիչներ են համարվում **այ>է, Ե, յու>ե** երկինչյունների հնչյունափոխված տարբերակներով կազմված ձևերը, որոնք գրողի խոսքում հաճախադեպ են: Օր.՝ «**էն** տարի, ասում եմ, -գայրացած ճչաց Ղազարոսը,-որ Վերի **գեղը** կրակ ընկավ, ամառը՝ կեսօրին» (ՀՏ, 113): Դրական զգացմունք, սիրալիրություն արտահայտելու նպատակով հեղինակը հերոսների խոսքում հաճախակի է տեղ տալիս **-ակ, -իկ, -ուկ, -իկ** փոքրացուցիչ-փաղաքշական մասնիկներով կազմված ժողովրդական խոսքի

⁵ **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 21:

⁶ **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 584:

հուզաարտահայտչական բառախմբին: Օր.⁷ **մարդուկ** (ՇՀ, 12), **հատորիկ** (Պ, 36, 1950), **պարտիզակ** (Վ, 35), **կարճիկ** (Հ, 233):

Հուզաարտահայտչական միջոցների շարքում իրենց ուրույն տեղն ունեն ձայնարկությունները, որոնք գրողի արձակի աշխույժ, կենդանի, անմիջական երկխոսությունների լեզվական արտահայտության անբաժանելի տարրեր են: Օր.⁷ «-Հե՛յ, Դեյվի՛դ, բռնեցեք դրան, -խավարում լավեց Բիվեյի ծայնը» (ՇՀ, 273): Հերոսների խոսքում զգալի են բնածայնական բառերը կամ նմանածայնությունները, որոնք բնության մեջ եղած ձայների բացարձակ ընդօրինակումը չեն. դրանք իրական ձայները, շարժումը արտացոլում են լեզվականորեն, մարդկային լեզվի տարրորշված հնչյուններով⁷: Բնածայնական շատ բառերից կազմվում են բայեր, որոնցից էլ՝ գոյականներ, դրանցով գրողն իր խոսքը դարձնում է կենդանի և պատկերավոր: Օր.⁷ **քրթքրթալ՝** «Փողոցի դռնից ինչ-որ **քրթքրթոց** էր լսվում» (Վ, 225), **խոթխոթալ՝** «Այս ի՞նչ **խոթխոթոց** է» (Վ, 165):

Ժողովրդախոսակցական բառերի շարքում առանձնանում են հատուկ անունների ժողովրդական ձևերը, որոնք օգտագործվում են հերոսների տիպականացման նպատակով: Օր.⁷ **Քնկոտ Ալի** (ՇՀ, 376), **Փնթի հաչո** (Պ, 82, 1965), **հաշլամա Գարսևան** (Ա, 66, 1985) և այլն:

Գեղարվեստական խոսքին առանձնակի հմայք են հաղորդում վեպերում և պատմվածքներում գործածված առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը, որոնք բանասիրական միավորներ են և ստեղծվել են մեր ժողովրդի կողմից: Դրանցում ամփոփված են ժողովրդի փորձն ու իմաստությունը, մտքի թռիչքն ու խոհեմությունը: Օր.⁷ «Շան գլուխն ուրիշ տեղ է թաղված» (Վ, 194), «Բրուտը կոտրված կժից է ջուր խմում» (Հ, 435) և այլն:

Ժողովրդական լեզվամտածողության տիպական տարրերից են **հարադրական բարդությունները**, որոնք իրենց գրեթե բոլոր տեսակներով տեղ են գտել Ա. Ավագյանի խոսքարվեստում: Ձևաբանական տեսանկյունից դիտարկելիս նկատում ենք, որ հեղինակի բառապաշարում զգալի են թե՛ հարադրական (անվանական և բայական) և թե՛ կրկնավոր ու բաղիյուսական բարդություններով կազմված հարադրությունները:

Ավագյանի հերոսների խոսքում տեղ են գտել նաև բառապաշարի սահմանափակ գործածություն ունեցող բառաշերտին պատկանող, գրական նորմին չհարող բառերը՝ **հասարակաբանություններն** ու **գռեհկաբանությունները**:

Ա. Ավագյանը ևս, ինչպես հայ գրողներից շատերը, տեղ է տվել **բարբառային** բառերի և բառաձևերի նպատակային գործածությանը: Կարելի է ասել, որ նրա խոսքը ոչ թե բարբառային խոսքի դրսևորում է, այլ բարբառային տարրեր պարունակող ժողովրդախոսակցական լեզվի գեղարվեստականացված անհատական տարբերակ: Բարբառային բառերի գործածություն մեծ մասամբ հանդիպում է գրողի պատմվածքներում, որը պայմանավորված է

⁷ Տե՛ս Հ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Ե., 1980, էջ 388-396:

գործող անձանց անհատականացնելու և նրանց խոսքը ոճավորելու նպատակով: Օր.՝ **օղլուշաղ**⁸ (ՎՀ, 20), **մասխարա**⁹ (ՎՀ, 330), **վաթան**¹⁰ (ՇՀ, 443) և այլն:

Բառապաշարի անքակտելի մասն են կազմում **հնաբանությունները**, որոնք բաժանվում են երկու խմբի՝ **պատմաբաներ (խտորիզմներ) և հնաբաներ (արխաիզմներ)**: Պատմաբաները բաժանվում են հետևյալ խմբերի. **ա)** զենքերի, ռազմական և որսորդական պարագաների անվանումներ. **պարսատիկ** (ՇՀ, 46), **սաղավարտ** (ՇՀ, 428), **սակր** (Պ, 32, 1965), **բրիչ** (Պ, 127, 1965): **բ)** Պաշտոններ, կոչումներ և պատմական այլ երևույթներ. **բեկ** (Վ, 122), **շահ** (ԵԷՁԵ, 32), **ցար** (Վ, 120), **տասնապետ** (ՄԱ, 39), **գահատոհմ** (ԵԷՁԵ, 71), **վերակացու** (ՎՀ, 125), **ամենապետ**¹¹ (ամենքի պետ, ընդհանուր հրամանատար) (ՇՀ, 357): **գ)** Խորհրդային շրջանին բնորոշ զանազան հասկացություններ արտահայտող բառեր, որոնք այսօր դիտվում են հնաբանություններ. **կոլխոզ** (Պ, 186, 1958), **բրիգադիր** (ՇՀ, 62), **կոլտնտեսություն** (Վ, 71), **պիոներ** (ՆԴ, 120):

Հնաբաների մեջ արտահայտչական մեծ դեր ունեն գրաբարում գործածված բառերն ու կապակցությունները (գրաբարաբանություններ), որոնք խոսքին հաղորդում են հանդիսավորություն, վեհություն: Վերջիններս հանդես են գալիս հերոսների խոսքում, որոնց գործածությունը պայմանավորված չէ ոճարտահայտչական խնդիրներով, այլ այդ բառերի իմաստն ընդգծելու նպատակով: Օր.՝ **գայն հատուցել** (ՎՀ, 380), **ձեռաց** (ՆԴ, 66), **զգեստնել** (ՇՀ, 217) և այլն:

Լեզուն անընդհատ զարգանում, համարվում և հարստանում է նոր բառերով և արտահայտություններով՝ **նորաբանություններով**: Բառարանային տվյալների հիման վրա պարզեցինք, որ Ա. Ավագյանի գործածած շուրջ 50 բառեր որևէ բառարանում վկայված չեն¹²: Հաշվի առնելով, որ դրանք բաղադրյալ և մասամբ անսովոր կազմություններ են, ենթադրվում է, որ Ա. Ավագյանի կողմից են կազմվել: Օգտվելով հայերենի բառակազմական հարուստ հնարավորություններից և միջոցներից՝ Ա. Ավագյանը նոր բառեր է կազմում իսկական բարդությամբ, հատկապես հողակապի միջոցով, որոնք աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ և իմաստային արժեքով: Օր.՝ **բակակոիվ** (Պ, 7, 1963), **բլրակածան** (ՎՀ, 112), **պահակասենյակ** (ՎՀ, 145), **կիսադեզ** (ՎՀ, 517) և այլն: Հեղինակի երկերում կարելի է հանդիպել նաև անհոդակապ

⁸ Տեցիներ, մեկի ընտանիքը (կինն ու երեխաները), տե՛ս **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 1590:

⁹ Ծիծաղաշարժ, ծաղրաշարժ, տե՛ս **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 971:

¹⁰ Հայրենիք, տե՛ս **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 1351:

¹¹ Տե՛ս **Ստ. Մալխասյանց**, Հայերէն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. 1, Ե., 1944, էջ 65:

¹² Տե՛ս **Ստ. Մալխասյանց**, նշվ. աշխ., հի. 1-4, Ե., 1944-1945, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հի. 1-4, Ե., 1969-1980, **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., Ե., 1976, **Փ. Մեթրիխանյան**, Նոր բառերի բացատրական բառարան, Ե., 1996, **Ս. Էլոյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002:

կազմությունների: Օր.՝ **ծայրկոթ** (ՇՀ, 357), **օրմեջ** (ՎՀ, 191), **մյուսափնյա** (ՎՀ, 518) և այլն: Հանդիպում են նաև գունային նրբերանգներ արտահայտող բաղադրությունների նոր կազմություններ, որոնք օգնում են բնապատկեր ստեղծելուն: Օր.՝ **գորշ-կապտագույն** (ՆԴ, 218), **գորշ-արնագույն** (Պ, 78, 1958), **գորշադեղնագույն** (Պ, 46, 1958), **գորշադեղնավուն** (ՇՀ, 132), **մոշագույն** (ՎՀ, 443), **դեղնամանիշակագույն** (Պ, 3, 1958), **դեղնականաչագույն** (Վ, 59) և այլն:

Ա. Ավագյանի արձակում այլ լեզուներից կատարված **փոխառություններում** նկատելի են հասարակական-քաղաքական կյանքի, կենցաղի և այլ բնագավառների վերաբերող բառեր, որոնք ռուսերենից անցել են հայերենին անմիջական կամ միջնորդավորված ձևով: Օր.՝ **կոմունիզմ** (Վ, 123), **ֆաշիզմ** (Վ, 24), **լեյտենանտ** (ՇՀ, 47), **գեներալ** (ՇՀ, 46), **պրոֆեսոր** (ՇՀ, 25), **դեկան** (ՆԴ, 115):

Հեղինակի արձակում տեղ գտած **օտարաբանությունները** ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն և պարսկերեն բառեր են, որոնք մեծ մասամբ օգտագործվում են այլազգի հերոսների խոսքում՝ նրանց սոցիալական, ազգային պատկանելությունն ընդգծելու և խոսքը ռճավորելու նպատակով: Օր.՝ «**Մերսի**, ասում է տղան, **-թենք յու, մոյ добрый отец**, -հետո գնում, բերում է դեղին պուտերով մուգ գույնի մի փողկապ և ինքն էլ կապում հոր վզին, -այ՛, իսկական **սուլիդ ջենտլմեն**, իսկ հիմա ահա թե ինչ պիտի անես, պա՛պ» (ՎՀ, 154): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշ ռուսերեն բառեր հեղինակի և հերոսների խոսքում չունեն ռճական արժեք և անհարկի օտար բառեր են: Օր.՝ «Դեզին իր **պրոգրամն** ավարտեց» (ՇՀ, 267):

Պարսկական միջավայրի երանգավորմանը նպաստում են համապատասխան առօրյան և կենցաղն արտացոլող ստեղծագործություններում գործածված պարսկերեն անձնանունները, տեղանուններն ու առօրյա հաղորդակցման բառերը: Օր.՝ «Եկե՛ք ծանոթանանք. այս ընկերը, որ հիմա նստել է մեր դիմաց, **Ղուամին** է, այս **Ահմադիանն** է, այս **Բալային**, այս մեր **Ռազեդին** է, մեկը, որ երբ ասում ես «Օղաքս», քիչ է մնում մարդ խժո՛ի, այս **Ռեզան** է, այս **Փարվիզին...**» (Պ, 122, 1965): Պարսկական տեղանունների բաղադրիչների սեռական հոլովի իմաստն արտահայտվում է հատկացուցիչ-հատկացյալ իզաֆետային կապով¹³: Օր.՝ **Թանգե-Մալավի** (Պ, 141, 1965), **Շահրե-Շադ** (Պ, 174, 1962) և այլն: Խոսքը հավաստի, համոզիչ, պատկերավոր դարձնելու նպատակով հեղինակը հերոսների խոսքում հաճախ է օգտագործում պարսկերեն ողջույնի ձևեր, բացականչական բառեր և արտահայտություններ, որոնք պատկերավոր ձևով նկարագրում են պարսկական միջավայրը: Օր.՝ «**Ալլահը վկա**» (Պ, 107, 1958), «**Սալա՛մ ալեյքում**, Առուստա՛մ աղա» (ՎՀ, 86):

Պարսկերենի ազդեցությամբ են կազմվել որոշ դարձվածային միավորներ: Օր.՝ **գլուխ քաշել-նայել, տեսնել**՝ «Ուստա Գեղամ, ե՛րբ ես գալու Մեղրիչայի նոնենիներին **գլուխ քաշելու**» (Պ, 65, 1958), **լեզվի բերել**-

¹³ Տե՛ս Ք. Բախշինյան, Հ. Բիանջյան, Լ. Ղազարյան, Գ. Մելիքյան, Պարսկերենի դասագիրք, Ե., 2011, էջ 52:

խոսեցնել¹⁴ «Դե, նրանք կարծում են, որ իրենց մամլակով կարող են մարդկանց **լեզվի բերել**, սակայն այդ նրանց չի հաջողվում» (ՇՀ, 320):

Վեպերում և պատմվածքներում տեղ գտած պարսկերեն բառերի, անձնանունների և տեղանունների մի մասի բացատրությունը տրվում է հեղինակի կողմից տողատակի հղումներով կամ խոսքաշարային բացատրությամբ: Օր.՝ «Գեղամը գնաց գետում լողացավ, եկավ սնդուկից հանեց սև շավկարն ու սպիտակ վերնաշապիկը, բեղերին ու մազերին **գոլաբ**¹⁵ քսեց և **Թուֆի**¹⁶ աղջկան ձեռքերով ասաց...» (ՎՀ, 21), «Եթե նրանք Իրան են մտել հատկապես մեզ կաթսայի մեջ խաշելու համար, կխաշեն, ուզում ես գնա Ահվազ կամ թե չէ բարձրացիր **Դամավանդի**¹⁷ գագաթը» (ՇՀ, 39): Սակայն միշտ չէ, որ ստեղծագործություններում տեղ գտած պարսկերեն բառերը բացատրվում են, հաճախ ընթերցողը համատեքստից է հասկանում բառի բուն իմաստը: Օր.՝ **Ֆինջան-բաժակ, գավաթ**¹⁸՝ «Գյուղացիները նստել էին գետափին և փոքրիկ **Ֆինջաններով** թեյ էին խմում» (Վ, 63), **դադաշ-եղբայր**¹⁹՝ «**Դադաշ**, թեքվելու ժամանակ ինչո՞ւ ես գազը սեղմում» (Պ, 139, 1965): Թեև Ա. Ավագյանն իր կյանքի մեծ մասն ապրել է Հայաստանում, սակայն հայրենիք վերադառնալուց հետո էլ իր տպավորությունները քաղում էր արևելյան աշխարհից՝ Թեհրանից, որտեղ սկսել է ստեղծագործել և տպագրել իր առաջին շրջանի գործերը: Ծննդավայրն իր կնիքն է դրել նրա գրական աշխարհայացքի ձևավորման և լեզվամտածողության վրա:

Ա. Ավագյանի բառապաշարում ընդհանուր գրական հայերենի կողքին մի փոքր մաս են կազմում նաև այն գրական բառերը, որոնք բնորոշ են **արևմտահայերենին**: Արևմտահայերեն բառերի կարելի է հանդիպել, մասնավորապես, «**Հարված**» վեպում և «**Հիշում ես, Հարություն**» պատմվածքում:

Երկրորդ բաժինը նվիրված է բառերի **ձևահմաստային խմբերի՝ հոմանիշ և հականիշ, համանուն և հարանուն բառերի** քննությանը: Հեղինակի խոսքարվեստում **հոմանիշ** բառերի իմաստային ընդհանրությունը հիմնականում դրսևորվում է երկու մակարդակում՝ լեզվական և խոսքային: Գրողի արձակում հոմանիշային շարք են կազմում պարզ և բառակազմական տարբեր ածանցներով (նախածանց, վերջածանց) կազմված բառերը. **ա) պարզ բառեր**. «Արվեստը պիտի մոտ լինի ժողովրդին, շոշափվի, առանց դրա այն դառնում է մի տեսակ **օտար, խորթ**» (Վ, 62): **բ) Պարզ և ածանցավոր բառեր**. «Պայմանավորվեցին նորից հանդիպել, այլ կերպ չէր էլ կարելի, գյուղը փոքր էր, **խաղաղ, անդորրավետ**» (Պ, 88, 1965): **գ) Նույն ժխտական նախածանցով բաղադրություններ**. «Առավոտից ինչ-որ անհանգիստ տրամադրություն ունեմ,

¹⁴ Իրանագետ, թարգմանիչ **Է. Բեգիջանյան** (բանավոր հաղորդում):

¹⁵ **գոլաբ**-վարդաջուր, տե՛ս **Ա. Ավագյան**, Վերջին հանգրվան, Ե., 1982, էջ 21:

¹⁶ **Թուֆի**-աղջկա անուն, նաև նշանակում է թութակ (պարս.), տե՛ս նույն տեղում, էջ 16:

¹⁷ **Դամավանդ**-ամենաբարձր լեռը Իրանում, տե՛ս **Ա. Ավագյան**, Շիկացած հող, Ե., 1955, էջ 39:

ինչ-որ **անմիտ, անիմաստ նախագագում»** (Պ, 14, 1962): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հոմանիշային շարքի անդամները հաճախ հանդես են գալիս նաև խոսքիմասային տարբեր պատկանելությամբ: Ավելի հաճախահեյ էն նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերով՝ բայով, գոյականով, ածականով կազմված հոմանիշները:

Ի տարբերություն հոմանիշների՝ **հականիշ** բառերը չունեն կառուցվածքային և իմաստային այն բազմազանությունը, որով օժտված են հոմանիշ բառերը, բայց եղածներն էլ բավարար են՝ պատկերացում կազմելու հեղինակի՝ հականիշ բառեր կազմելու բառընտրության առանձնահատկությունների մասին: Ա. Ավագյանի արձակում լեզվական հականիշները բաժանվում են հետևյալ իմաստային խմբերի. **ա)** տեղի և տարածական իմաստ արտահայտող: Օր.՝ «Բայց Նունեն շուռումուռ է գալիս, նայում էր **վերև, ներքև** և կամացուկ շշնջում» (Պ, 8, 1958): **բ)** Ժամանակային իմաստ արտահայտող: Օր.՝ «Ջորջ Թոմսոնը տխրում էր Աիվազում, նեղվում էր՝ **ցերեկները** շոգից, **գիշերները՝** ձանձրությից» (ՇՀ, 74): **գ)** Երևույթների արտաքին և ներքին հատկանիշներ արտահայտող: Օր.՝ «**Հարուստներից** նա վերցնում էր փող, **աղքատներից՝** ինչ պատահեր» (ՆԴ, 40):

Ա. Ավագյանի ստեղծագործություններում տեղ են գտել նաև **համանուն և հարանուն** բառերը, որոնք թեև զգալի թիվ չեն կազմում, բայց թույլ են տալիս պատկերացում կազմելու գրողի բառընտրության առանձնահատկությունների մասին: Իրենց կիրառության հաճախականությամբ առանձնանում են բառային համանունները, որոնք որոշակի երանգավորում են հաղորդում հեղինակի գեղարվեստական խոսքին:

Երրորդ բաժնում քննվում են **դարձվածային միավորների** իմաստային, գործառական-ոճական նշանակությունն ու գեղագիտական արժեքը: Հմտորեն օգտվելով ազգային լեզվի դարձվածային հարուստ գանձարանից՝ հեղինակն իրականացնում է բազմազան ոճական նպատակներ՝ նպաստելով խոսքի հակիրճությանը, հուզականությանը, արտահայտչականությանը, ոճի բազմազանությանը, խոսքի տիպականացմանը, վերարտադրելիությանը:

Ատենախոսության **երկրորդ՝ «Պատկերավորման և արտահայտչական միջոցները»**, **գլխում** ներկայացվում են Ա. Ավագյանի խոսքարվեստին բնորոշ պատկերավորման և արտահայտչական միջոցները:

Հեղինակի պատկերավորման համակարգի կարևոր միջոցներից մեկը **մակդիրն** է, որը գեղարվեստորեն, պատկերավոր ձևով ընդգծում և բնորոշում է որևէ առարկայի կամ երևույթի հատկանիշը և նրա նկատմամբ որոշակի վերաբերմունք է դրսևորում: Գունեղ և դիպուկ մակդիրների միջոցով հեղինակն ստեղծում է առարկաների, երևույթների ամբողջական և տեսանելի պատկերներ: Մակդիրները մեծ մասամբ արտահայտվում են ածականներով, ընդ որում՝ ինչպես որակական, այնպես էլ հարաբերական: Օր.՝ **ժլատ** փաթիլ (Պ, 24, 1958), **տխուր** բեկոր (Պ, 6, 1965), **ներսգ** ժպիտ (ՆԴ, 14), **կծու** հայացք (ՆԴ, 95), **կապարե** լուրջություն (Պ, 185, 1965), **սառցե** խոսք (ԵԷՁԵ, 153), **քարե**

արցունք (Վ, 227): Մակդիիրներն արտահայտվում են նաև որոշ դերբայներով: Հաճախադեպ են հարակատար և ենթակայական դերբայներով կազմված մակդիիրները: Օր.՝ **հոգնած** արև (ՆԴ, 24), **ալեկոծվող** վիշտ (ՆԴ, 71) և այլն:

Պատկերավորման մյուս միջոցը, որից հմտորեն օգտվել է Ա. Ավագյանը, **համեմատությունն** է. հանդիպում են համեմատության մի շարք տեսակներ, որոնք իմաստային-բովանդակային տեսակետից կարելի է բաժանել հետևյալ խմբերի. **ա) անձի համեմատությունը կենդանու հետ:** Համեմատվում է մարդու որևէ իրավիճակ կամ հատկանիշ կենդանու որևէ հատկանիշի հետ: Օր.՝ «Թե որտեղից եկավ Բիլ Թոմսոնը, ոչ ոք չգիտեր, բայց նա եկավ, ինչպես սարդի փափուկ սովերը սողալով» (Պ, 111, 1958): **բ) Անձի համեմատությունն առարկայի հետ:** Այսպես, օրինակ, «Իսանդը» պատմվածքի հերոսուհու առկայծուն կապույտ աչքերը գրողը համեմատում է տիկնիկի ապակյա աչքերի հետ հետևյալ ձևով. «Աղջիկը նիհար էր, գունատ, մազերը շիկակարմիր, աչքերը կապույտ էին, մի տեսակ առկայծուն, ինչպես տիկնիկի ապակյա աչքերը» (Պ, 52, 1958): **գ) Անձի համեմատությունը բնության երևույթների հետ:** Հաճախադեպ են այն համեմատությունները, երբ համեմատվում են անձինք և բնության երևույթները: Օր.՝ «Նա գառամ է ու փխրուն, ինչպես հինավուրց այս հացենու փչակը» (ԵԷՉԵ, 7):

Խոսքը պատկերավոր, բազմազան և արտահայտիչ դարձնելու նպատակով հեղինակը հմտորեն է օգտվում բառերի **փոխաբերական** իմաստներից: Հաճախ որևէ առարկայի շատ սովորական, առօրյա թվացող հատկանիշը վերագրում է նրանից բոլորովին տարբեր մի առարկայի: Վերջինիս մեջ տեղի է ունենում տարբեր հատկանիշների իմաստային խաչաձևում: Ստացված նոր իմաստն ավելի խորն է լինում, ավելի բազմազան և ներառում է երկու առարկաների կամ երևույթների հատուկ հատկանշային նրբերանգներ: Օր.՝ «-Կանայք են, -ասաց նա, -մի քանիսն այրի են, մի քանիսի ամուսիններն էլ արդեն **մազադաթ են դարձել**» (ՎՀ, 403):

Որպես այլաբերության տեսակ՝ Ա. Ավագյանն օգտագործում է **փոխանունությունը**, որի դեպքում իրար հետ կապված առարկաների կամ երևույթների անվանումներից մեկի փոխարեն օգտագործվում է մի ուրիշը: Փոխանունության միջոցով արտահայտվող առարկաների կամ առարկայի և հատկանիշի միջև եղած հարաբերությունների հիմական տեսակներից հեղինակի արձակում հանդիպում են հետևյալները. **ա)** պարունակողը պարունակյալի փոխարեն, որի գործածության ժամանակ բառակապակցությանը փոխարինող բառն արտահայտում է և՛ իր, և՛ փոխարինած բառի իմաստը: Օր.՝ «**Սև թուղթն** ասում է, որ Դավիթն ընկավ Կերչի մոտ» (Պ, 6, 1958): **բ)** Առարկան, երևույթը բնութագրող հատկանիշի անվանումը ներկայացվում է նույն առարկայի անվան փոխարեն: Օր.՝ «Նրանք հավատացած էին, որ **սովետները** կխախտեն պայմանագիրը և կմնան» (Վ, 69): **գ)** Տեղը, վայրը հաճախ ներկայացվում է մարդկանց փոխարեն: Օր.՝ «Գյուղապետն ապրած կենա, **ողջ Սավեջ գյուղը վկա՛** ես միայնակ մարդ եմ» (ԵԷՉԵ, 83):

Փոխաբերության մի տեսակ է **անձնավորումը**, որի միջոցով իրերն ու երևույթները կենդանանում են, շունչ ու ոգի են առնում, մարդկային հատկանիշներ են ձեռք բերում: Օր.՝ «Թթենու ճղները ձյան ծանրությունից կքվել էին, թվում էր՝ **ծերունի ծառը սպիտակ վերմակի տակ քուն է մտել, և երազում տեսնում է ամռան միջօրենների տապը, ուրախ կերուխումը՝ իր առատորեն փռված սավերում**» (ՎՀ, 309):

Պատկերավորման մյուս միջոցներից աչքի է ընկնում **չափազանցությունը**, որը հեղինակի խոսքը դարձնում է հարուստ, պատկերավոր և բազմազան: Օր.՝ «**Դժբախտություններն ավելի շատ են, քան աստղերը երկնքի վրա**» (ՀՏ, 462): Չափազանցության հակառակ երևույթը **նվազաբանությունն** է, որի դեպքում որևէ առարկայի կամ երևույթի հատկանիշը ներկայացվում է նվազեցված չափերով: Օր.՝ «Այս գյուղը ես տեսել եմ, **մի բռաչափ** տեղ էր, բայց արի ու տես, որ կոչվում է «Դեհե-Դոնյա», այսինքն՝ աշխարհի գյուղ» (ՎՀ, 516):

Գեղարվեստական գրականության մեջ հաճախ է պատահում, երբ խոսքի մեջ առարկան կամ երևույթն ուղղակի անվանելու փոխարեն տրվում է նրա նկարագրական բնութագիրը, որն ավելի պատկերավոր և տպավորիչ է դարձնում հեղինակի գեղարվեստական խոսքը: Ոճական այս հնարանքը հայտնի է **շրջասույթ** անունով: Ա. Ավագյանն ինքնատիպ շրջասությունների միջոցով է բնորոշում երևույթները: Օր.՝ «**պարտականությունների օղակ-ամուսնություն՝** «Ինչո՞ւ կարգվի,-հայտարարեց մարդը,-**պարտականությունների օղակը** կախի վզի՞ն» (ՄԱ, 50):

Ա. Ավագյանի արձակում **կրկնությունը** հաճախակի հանդիպող լեզվական իրողություն է, որն ընդգծում է խոսքի հուզականությունն ու արտահայտչական արժեքը: Հաճախ են հանդիպում բայով, ածականով, դերանվանբ կազմված կրկնությունները: Օր.՝ «Երկաթգծի կայարանի մատույցներում. դա մի **հին** թաղ էր՝ **հին** բակերով, **հին** տներով ու մի քանի տասնյակ ապրած **հին** ծառերով» (ՎՀ, 175):

Կրկնության հատուկ արտահայտություն է շաղկապների հաճախակի գործածությունը՝ **բազմաշաղկապությունը**, որը, ունենալով ոճական որոշակի արժեք, շեշտում է յուրաքանչյուր բառային միավորի նշանակությունը՝ ընդգծելով կապակցական գործառույթը: Օր.՝ «Ամբողջ օրն այդ մարդիկ ձանձրոյթից **կա՛մ** կոպտում են իրար, **կա՛մ** լռում, **կա՛մ** ուտում, **կա՛մ** լաց լինում» (Պ, 146, 1958):

Գեղարվեստական խոսքի զգացմունքայնությանը նպաստում է որևէ առարկայի կամ երևույթի աստիճանական զարգացումը՝ **աստիճանավորումը**: Հեղինակը հիմնականում օգտագործել է բարձրացող աստիճանավորում, որի միջոցով պատկերավոր ձևով ցույց է տալիս որևէ երևույթի աստիճանական աճը, սաստկացումը: Օր.՝ «Եթե նրանք իրաժարվեն, ապա մենք **կխնդրենք, կաղերսենք, նույնիսկ լաց կլինենք**, և նրանք մեր ծերունական արցունքներին տեղի կտան» (ՎՀ, 152):

Ա. Ավագյանի երկերում ոճաարտահայտչական ուրույն դրսևորում ունի **հակադրույթը**, որի դեպքում գրողը հատուկ նպատակով համադրում է երկու

առարկաներ կամ երևույթներ, որոնք իրենց արտահայտած իմաստով և նշանակությամբ հակադիր են: Օր.՝ «Սուսիկը շառագունեց. մի քիչ **լաց եղավ**, հետո էլ մի քիչ **ծիծաղեց**» (ՎՀ, 102):

Ճարտասանական հարցն ու ճարտասանական բացականչությունը, բացթողումն իրենց գրեթե բոլոր դրսևորումներով Ա. Ավագյանի խոսքին հաղորդում են զգացմունքայնություն, արտահայտչականություն, ընդգծում են խոսքի երանգն ու պատկերավորությունը:

Ատենախոսության **երրորդ՝ «Քերականական իրողությունները», գլխում** քննվում են **ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները**: Ա. Ավագյանի արձակում տեղ գտած **ձևաբանական առանձնահատկությունները** հիմնականում դրսևորվում են գոյականի հոլովման, թվի և առկայացման քերականական կարգերում:

Գոյականի ամենակարևոր քերականական կարգերից մեկը հոլովումն է: Ժամանակակից գրական հայերենը ունի միևնույն քերականական իմաստն արտահայտող զուգաձևությունների և համանիշների ընտրության տարբեր միջոցներ: Այդ իսկ պատճառով գեղարվեստական խոսքում ոճական որոշակի արժեք կարող են ստանալ քերականական կարգերը՝ ընդունված ձևերից բացի, մեկ այլ՝ զուգահեռ ձևով արտահայտելը: Ա. Ավագյանի արձակի լեզվի քննությունը ցույց է տալիս, որ գերիշխողը **և** հոլովումն է, որի առկայությունը բացատրվում է մյուս հոլովումների մի զգալի մասին փոխարինելու կարողությամբ: Մյուս հոլովումներին ենթարկվող գոյականները հաճախ հոլովվում են **ի** հոլովմամբ, որը վկայում է այս հոլովման գանգվածային գործածությունը և բացարձակ գերակշռությունը մյուսների հանդեպ: Օր.՝ **ձյուն** գոյականը ներքին **ա** հոլովման հետ միասին արտաքին **ի** հոլովմամբ է հոլովվում. **ան>ի՝ ձյուն-ձյան-ձյունի՝** «Առաջին **ձյունը** եկավ» (Պ, 24, 1958), «Մեր արտասանած խոսքերն իսկույն սառչում էին օդում ու թափվում **ձյան** վրա» (ԵԷՁԵ, 64), «Սպասուհի Ոսկին **ձյունի** պես ճերմակ էր» (ՎՀ, 403): Այդպես նաև ժամանակ ցույց տվող որոշ բառեր, որոնք ժամանակակից հայերենում պատկանում են **վա** հոլովման, գրողի արձակում ստացել է նաև **և** հոլովիչ. **օր-օրվա-օրից՝** «Ուրբաթ **օրվա** լույս շաբաթին այդ մարդը ծիծաղելով հասավ Բաղդատ» (ԵԷՁԵ, 77), «Տրտնջում էին թխպամած **օրից**, քամիներից» (ՆԴ, 192):

Հոգնակի թիվը հիմնականում կազմվում է ժամանակակից հայոց լեզվում ընդունված կանոնների համաձայն՝ ստանալով **եր, ներ, իկ, ք** մասնիկներ: Սակայն կան գրական նորմից շեղվող առանձնահատկություններ, որոնք հեղինակի խոսքի բնորոշ երևույթներից են: Դրանք պայմանավորված են նաև այս կարգի բառաքերականական բնույթով: Ժամանակակից հայոց լեզվում միավանկ բառերը ստանում են **եր** (բացառությունները նկատի ենք ունեցել), իսկ բազմավանկ բառերը **ներ** հոգնակիակերտ վերջավորություններ: Գրողի երկերում հանդիպում ենք այս օրինաչափությունից շեղումների: Իրենց ոճական ինքնատիպությամբ առանձնանում են անհոգնական գոյականների հոգնակիով գործածության դեպքերը: Օր.՝ **երկինք, աշխարհ, ձյուն, արև** և այլ բառեր

հեղինակի երկերում հանդես են գալիս հոգնակի թվով. «**Երկինքներից** հետո ամեն ինչ նեղ է թվում» (Պ, 139, 1965) և այլն:

Հայերենում առկայացման կարգն ունի իմաստային-քերականական առանձնահատկություններ, որոնք ձևավորվում են հոդերի միջոցով: Ա. Ավագյանի արձակում նկատելի է հոդի առանձնահատուկ գործածությունը՝ որպես խոսքի դրսևորման անհատական և նշանակալի միջոց: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ և՛ հեղինակի, և՛ հերոսների խոսքում զգալիորեն գործածվում է **և** որոշյալ հոդի քերականական ավելադրությունը, որը, սակայն, կարծում ենք, ինքնանպատակ չէ այն առումով, որ դրանով հեղինակն ավելի է ընդգծում ժողովրդական լեզվին բնորոշ բարբառային տարրը: Վերջինս նրա լեզվի բնորոշ առանձնահատկություններից է: Օր.՝ «-Այո՛, կապիտան, Բոլսը **գրասենյակումն** է» (ՇՀ, 160):

Տրական, բացառական և գործիական հոլովների կազմությունը հիմնականում նույնանում է գրական լեզվի հետ, բացառությամբ որոշ դեպքերի, երբ հոլովական վերջավորություններից առաջ հանդես է գալիս **ը** որոշյալ հոդը, որը բնորոշ է բարբառներին: Օր.՝ «Սաթենիկի քրոջ **աղջկանը** Նարիմանը ոչ ուզեց, ոչ չուզեց, միայն ասաց...» (ՎՀ, 84):

Լեզվի **շարահյուսական** համակարգի առանձնահատկությունները դրսևորվում են նախադասության կառուցվածքում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ Ա. Ավագյանը հավատարիմ է մնում նախադասության կառուցվածքային հատկանիշներին և պահպանում է դրանց հիմնական օրինաչափությունները: Այս դեպքում քննության ենք առել պարզ և բարդ, միակազմ և երկկազմ նախադասությունների տարբեր տեսակներն ու ենթատեսակները, միջանկյալ և ներդրյալ, հավելական կապակցությունները:

Հեղինակի արձակում լայն կիրառություն ունի **միակազմ նախադասությունն** իր բոլոր տեսակներով: Վերջիններիս գործածությունը պայմանավորված է նրանով, որ հաճախ դիմելով միակազմ կառույցներին՝ գրողն անհատականացնում է առանձին կերպարների խոսքը՝ ստեղծելով միջավայրի համապատասխան գունավորում: Լինելով ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ կառույցներ՝ անենթակա նախադասությունները հեղինակային լեզվի ժողովրդայնությունը պայմանավորող միջոցներից են: Դրանք սովորաբար արտահայտվում են բայի եզակի երրորդ դեմքով և մատնանշում են բնության երևույթներ և ժամանակային հարաբերություններ:

Ա. Ավագյանի արձակի լեզվին բնորոշ լեզվական կառույցներ են **միջանկյալ** և **ներդրյալ** նախադասությունները, որոնք արտահայտում են լրացուցիչ տեղեկություններ, մեկնաբանություններ, բացատրություններ՝ կապված հիմնական նախադասության կամ նրա որևէ անդամի բովանդակության հետ: Հեղինակի արձակում միջանկյալ կառույցները հանդես են գալիս նախադաս և միջադաս՝ արտահայտելով հերոսների հաստատական կամ երկբայական վերաբերմունքն իրականության մեջ տեղի ունեցող որևէ երևույթի նկատմամբ: Օր.՝ «**Փա՛ռք աստծո**, ամեն ինչ լավ է» (Պ, 124, 1965), «Հիմա երեք

հարս, **չգիտես ինչո՞ւ**, նստել են ջրհորի մոտ» (ՎՀ, 15): Ի տարբերություն միջանկյալների՝ ներդրյալ կառույցները հեղինակի արձակում գերակշռում են: Դրանք ունեն միջադաս գործածություն և հիմնական նախադասության հետ առնչվելով՝ արտահայտում են. **ա)** պարագայական իմաստներ: Օր.՝ «Զմեռ լինեթ թե ամառ՝ տատիկը շոգում էր. նստում էր գահավորակին (**գիշերը հենց այնտեղ էլ քնում էր**), թաշկինակով հովհարում էր երեսը և հարցնում...» (ԵԷՁԵ, 43): **բ)** Լրացուցիչ բացատրություն-տեղեկություններ հիմնական նախադասության մեջ օգտագործված օտար տեղանունների մասին: Օր.՝ «Սարսափելի լեռ կար այնտեղ, տղաներ, -ասում են, -բնիկներն անունը դրել էին «Քուհե-Մար» (**Օձերի սար**), դրանից այն կողմ սկսում էր անապատ» (ՎՀ, 549):

Զգալի տեղ ունեն նաև տարբեր համադասական շաղկապներով միավորված **հավելական կապակցությունները**, որոնց դեպքում համադասական նախադասության երկրորդ մասն իմաստով և կառուցվածքով հավելում է նախորդ մասին: Օր.՝ «Ինը տարվա բանտարկության ընթացքում նա առնվազն քսան անգամ հացադոլ է հայտարարել, **իսկ** ամենասուկալի հացադոլը երկու տարի առաջ էր՝ 1939 թվի սեպտեմբեր ամսին» (ՇՀ, 90):

Ատենախոսության **չորրորդ՝ «Բնագրերի համեմատական քննություն»**, **գլխում** ներկայացվում են վերահրատարակված և վերամշակված ստեղծագործություններում տեղ գտած լեզվական և ոճական-արտահայտչական փոփոխությունները, որոնք գրողի նուրբ դիտողականության շնորհիվ ճշգրտվել, հղկվել և կատարելագործվել են:

Ըստ մշակման բնույթի՝ Ա. Ավագյանի երկերը բաժանել ենք երեք խմբի: Առաջին խմբում են հիմնականում նրանք, որոնք առաջին հրատարակությունից հետո չեն վերահրատարակվել, ուստի և փոփոխության չեն ենթարկվել: Դրանք են «Վաղը», «Շիկացած հող», «Նազելի Դալարյան», «Հարված» վեպերը:

Երկրորդ խումբն են կազմում այն ստեղծագործությունները, որոնք լրամշակվել են (ավելացումներ ու կրճատումներ, մասերի և տողերի վերադասավորումներ, լեզվաոճական բազմազան փոփոխություններ են կրել պատմվածքների տարբեր ժողովածուները): Դրանցից են «Կանաչ աղմուկ», «Շահրե-Շադ», «Միջօրե», «Մարդը անապատում», «Հարավի բեռնակիրները», «Հանդիպում», «Պատնեշ» և այլն:

Հետագա շրջանի գործերը, լինելով ավելի հասուն տաղանդի արդյունք, վերահրատարակվել են, սակայն գրեթե մշակման չեն ենթարկվել, ինչպես, օրինակ, «Անձրևը եկավ», «Այս ձանձրույթը», «Նրանք գնացին ետ նայելով», «Լիմեցի Սերոբը գնաց», «Երբ շոգում ծիծաղում են», «Ամենավերջինը», «Աստղերի ու սիրո մասին» և այլ պատմվածքներ:

Տարբեր հրատարակությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ա. Ավագյանը երկարատև և համբերատար աշխատանք է կատարել հատկապես այն պատմվածքների վրա, որոնցում նկարագրվող իրականությունն ու հերոսները, արտահայտվող զգացմունքներն առանձնապես թանկ և սրտամոտ են եղել իրեն:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արիզ Ավագյանի արձակի լեզվի համակողմանի և ամբողջական քննությունը հանգեցնում է հետևյալ եզրակացությունների.

1. Ա. Ավագյանի արձակում, ինչպես յուրաքանչյուր գեղարվեստական երկում, մեծ թիվ են կազմում համագործածական բառերը, որոնք լեզվի բառապաշարի հիմնական մասն են և ոճական ու հուզաարտահայտչական գունավորման տեսակետից չունեն գործածության որևէ սահմանափակում: Վերջիններս հանդես են գալիս իրենց ուղղակի, առաջնային իմաստներով և զուրկ են հուզաարտահայտչական երանգից, մինչդեռ խոսքային համատեքստում օժտվում են արտահայտչականությամբ՝ ձեռք բերելով փոխաբերական իմաստ և կիրառություն:

2. Հեղինակի խոսքին անմիջականություն, թարմություն, աշխուժություն և կենդանություն են հաղորդում ժողովրդախոսակցական, բարբառային, արևմտահայերեն բառերն ու արտահայտությունները: Ժողովրդախոսակցական բառաշերտում զգալի են նաև հուզականորեն երանգավորված մի շարք բառախմբեր, որոնք ցայտուն արտահայտչականություն և պատկերավորություն ունեն: Դրանցից են նվազական ածանցներով կազմված փաղաքջական բառերը, ձայնարկությունները, նմանաձայնությունները, բազմապատկական բայերը, որոնք անհրաժեշտ են անկաշկանդ, կենդանի և աշխույժ խոսք կառուցելու համար: Ժողովրդախոսակցական բառաշերտի առանձնահատկությունները լավագույն ձևով դրսևորվել են նաև ժողովրդական բանահյուսության ժանրերում՝ առածների, ասացվածքների և թևավոր խոսքերի մեջ:

3. Ա. Ավագյանի բառապաշարի բնորոշ մասն են կազմում հնաբանություններն իրենց երկու տեսակներով՝ հնաբառեր և պատմաբառեր, որոնք կարևոր նշանակություն ունեն հերոսների կերպավորման, պատմական ժամանակաշրջանի նկարագրման, հեղինակային խոսքի ոճավորման գործում: Ա. Ավագյանի արձակ խոսքն աչքի է ընկնում հեղինակային նորակազմություններով, որոնք հիմնականում բարդ և ածանցավոր բառեր են, ստեղծվել են հայերենի բառակազմական միջոցների և եղանակների օգնությամբ: Առավել ուշագրավ են գունային նորաբանությունները, որոնք ավելի պատկերավոր և տեսանելի են դարձնում նկարագրվող երևույթը, բնության տեսարանը կամ այն իրողությունը, որը տվյալ պահին հեղինակի վառ երևակայության ծնունդն է եղել:

4. Հեղինակի խոսքում նկատելի են ռուսերենից և ռուսերենի միջոցով այլ լեզուներից կատարված փոխառությունները, որոնք վերաբերում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներին: Գործածված օտարաբանությունները ևս բնորոշ իրողություններ են, որոնք հանդես են գալիս որպես տարբեր ժողովուրդների կյանքն ու կենցաղը ուրույն գծերով ներկայացնելու, հերոսներին տիպականացնելու, ինչպես նաև համապատասխան ազգային երանգավորում ստեղծելու լավագույն միջոցներ:

5. Հեղինակի խոսքում տեղ գտած հոմանիշ և հականիշ, համանուն և հարանուն բառերի բառակազմական, խոսքիմասային և գործառական-ոճական տարբեր նրբերանգները խոսքը դարձնում են հարուստ, բազմազան և ինքնատիպ:

6. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հեղինակն առատորեն և վարպետությամբ է օգտվել հարադրական բարդություններից, որոնց բաղադրիչներն ունեն խոսքիմասային տարբեր պատկանելություն և իմաստային տեսակետից իրար նկատմամբ հոմանիշ, հականիշ և իմաստով առնչակից իմաստներ են արտահայտում:

7. Ա. Ավագյանի բառապաշարում իրենց առանձնահատուկ տեղն ունեն դարձվածային միավորները, որոնց ընտրությամբ և գործածությամբ հեղինակի խոսքը դարձել է ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ, դիպուկ և պատկերավոր:

8. Հեղինակի գեղարվեստական մտածողության մեջ կարևոր տեղ ունի մակդիրը: Մակդրային գործածությամբ հեղինակի արձակում աչքի են ընկնում ածականները՝ ինչպես որակական, այնպես էլ հարաբերական, թեև առկա են նաև դերբայներով արտահայտված մակդիրներ: Առանձնահատուկ կիրառություն ունեն գունային մակդիրները:

9. Համեմատությունն իր բազմաթիվ տեսակներով Ա. Ավագյանի նախընտրած ոճական հնարաններից է, որը նպաստում է խոսքի պատկերավորությանը, նկարագրությունը դարձնում է ավելի տպավորիչ:

10. Հեղինակի գեղարվեստական խոսքն աչքի է ընկնում փոխաբերության տարբեր տեսակների գործածությամբ, որի հիմքում սովորաբար ընկած են լինում առարկաների, երևույթների և սրանց հատկանիշների որոշ նմանությունն ու ընդհանրությունը: Պատահական չէ, որ որևէ բառ կամ կապակցություն ուղղակի անվանելու փոխարեն գրողը դիմում է մեկ ուրիշ բառի կամ կապակցության՝ նպատակ ունենալով խոսքը դարձնել ավելի ազդեցիկ:

11. Գրողի խոսքին առանձնակի գունեղություն են հաղորդում նաև պատկերավորման մի քանի այլ միջոցներ ևս, ինչպիսիք են՝ շրջասությունը, չափազանցությունը, նվազաբանությունը, անձնավորումը, որոնց միջոցով խոսքն ավելի բազմերանգ է դառնում:

12. Ա. Ավագյանի խոսքի հուզականությանը նպաստում են արտահայտչական միջոցները, որոնցից իրենց գործածության հաճախականությամբ աչքի է ընկնում խոսքիմասային տարբեր պատկանելությամբ բառերի կրկնությունը: Խոսքի զգացմունքայնությանը նպաստում է որևէ երևույթի աստիճանական զարգացումը՝ աստիճանավորումը: Հերոսների խոսքին զգացական և հուզական երանգ ու արտահայտչականություն են հաղորդում ճարտասանական հարցն ու ճարտասանական բացականչությունը, բացթողումը:

13. Ձևաբանական իրողություններից ուշագրավ են հատկապես հոլովական համակարգում առկա զուգաձևություններից խոսակցականին անցած բնորոշ տարբերակների ընտրությունը, ժողովրդական լեզվի ազդեցությամբ հոգնակի

թվի կազմությունը և որոշ անհոգնական գոյականների՝ հոգնակիով գործածության դեպքերը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ և՛ հեղինակի, և՛ հերոսների խոսքում զգալիորեն գործածվում է **և** որոշյալ հոդի քերականական ավելադրությունը, որն ընդգծում է ժողովրդական լեզվին բնորոշ բարբառային տարրը: Վերջինս նրա լեզվի բնորոշ առանձնահատկություններից է:

14. Շարահյուսական համակարգի քննությունը ցույց է տալիս, որ հեղինակը հիմնականում հարազատ է մնացել հայերենի շարահյուսական համակարգի օրինաչափություններին՝ օգտվելով կապակցության հիմնական միջոցներից և եղանակներից:

Հեղինակի խոսքում իրենց ուրույն տեղն ունեն պարզ և բարդ, միակազմ և երկկազմ, միջանկյալ և ներդրյալ նախադասությունները, որոնց գործածությունը նպաստում է ամբողջական, լրացուցիչ տեղեկություններ, բացատրություններ արտահայտելու հիմնական նախադասության բովանդակության վերաբերյալ:

Գրողի արձակում նկատելի են նաև միավորական, ներհակական և հավելական շաղկապներով կապակցված, համադասական հարաբերություն արտահայտող հավելական կապակցությունները, որոնցից յուրաքանչյուրը մյուսին լրացնում, հարակից միտք է արտահայտում:

15. Բնագրերի համեմատական քննությունը ցույց է տալիս, որ Ա. Ավագյանը զգալի և ծավալուն աշխատանք է կատարել ստեղծագործությունները վերահրատարակելիս: Ըստ մշակման բնույթի՝ կատարել ենք դասակարգում՝ առանձնացնելով վերահրատարակված ստեղծագործություններում տեղ գտած լեզվական և ոճական-արտահայտչական փոփոխությունները, որոնք գրողի նուրբ դիտողականության շնորհիվ ճշգրտվել, հղկվել և կատարելագործվել են:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են.

1. **Եղիազարյան Ա.**, Կրկնավոր հարադրական բարդությունները Աբիգ Ավագյանի արձակում, «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումներ», Երևան, 2012թ., հունիսի 14-15, էջ 70-78:
2. **Եղիազարյան Ա.**, Մակդիրը Աբիգ Ավագյանի արձակում, «Կանթեղ», (գիտական հոդվածների ժողովածու), 3 (56), Երևան, 2013, էջ 41-46:
3. **Եղիազարյան Ա.**, Ժողովրդախոսակցական բառաշերտը Աբիգ Ավագյանի արձակում, «Հայագիտական հանդես», №3 (33), Երևան, 2016, էջ 16-25:
4. **Եղիազարյան Ա.**, Հոմանիշ բառերը Աբիգ Ավագյանի արձակում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», (հանդես), №3-4, Երևան, 2016, էջ 83-86:
5. **Եղիազարյան Ա.**, Նորաբանությունները Աբիգ Ավագյանի արձակում, «Գիտական աշխատություններ», (հոդվածների պարբերական ժողովածու), Գյումրի, 2016, էջ 235-240:
6. **Եղիազարյան Ա.**, Համեմատությունները Աբիգ Ավագյանի արձակում, «Հայագիտական հանդես», №1 (35), Երևան, 2017, էջ 39-45:

САТЕНИК ЭМИЛЕВНА ЕГИАЗАРЯН
ЯЗЫК ПРОЗЫ АБИГА АВАГЯНА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01-“Армянский язык”

Защита состоится 15 мая 2017 г. в 15⁰⁰ часов на заседании Специализированного совета по Лингвистике 019 ВАК при Институте языка им. Г. Ачаряна Национальной академии наук РА (адрес: 0015, Ереван, ул. Гр. Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению языка прозы одного из прозаиков армянской литературы второй половины XX в. Абига Авагяна. Проза Авагяна изучена и оценена с сугубо литературоведческой точки зрения. Впервые она подвергается всестороннему и целостному исследованию, включая слои словарного запаса, изобразительные и выразительные средства, морфологические и синтаксические особенности. Кроме этого, был проведен сравнительный анализ рукописей с целью выявления тех изменений, которые претерпели переизданные и переработанные произведения.

Во введении представлены некоторые эпизоды жизни и литературной деятельности А. Авагяна, дана общая характеристика его прозаических произведений, показано их языковое развитие от сборника к сборнику, ценность которых обусловлена оригинальностью художественного мышления автора и индивидуальным стилем.

Первая глава “Словарный состав прозы А. Авагяна” состоит из трех разделов. Первый раздел посвящен исследованию словарных слоев и их стилистических особенностей. Рассматриваются общеиспользуемые, просторечные, диалектные, западноармянские слова, архаизмы, неологизмы, заимствованные и иностранные слова. Второй раздел посвящен изучению морфосмысловых групп: синонимов и антонимов, омонимов и паронимов. В третьем разделе изучаются фразеологические единицы, имеющие функционально-смысловое значение и художественную ценность.

Во второй главе “Изобразительные и выразительные средства” представлены присущие художественному слову А. Авагяна изобразительные и выразительные средства. Язык автора выделяется многообразием, роскошью и богатством изобразительных и выразительных средств. Словам героев придают новые эмоции повторения средств выразительности, градация, риторический вопрос и риторическое восклицание, антитеза, пропуск, благодаря которым язык автора приобретает эмоционально-выразительный оттенок.

В третьей главе “Грамматические действия” изучаются морфологические и синтаксические особенности. В прозе А. Авагяна нашедшие место морфологические особенности в основном проявляются при склонении

существительных, в грамматических строениях числа и падежа, так как каждый из них наделен определенной стилистической выразительностью, а следовательно, становится средством стилизации слова.

В армянском языке порядок наличия слов имеет грамматически смысловые особенности, которые формируются при помощи артиклей. В прозе Авагяна особенно заметно употребление артикля как индивидуальное и важное средство выражения слова. Исследования показали, что в слове и автора, и героев в наибольшей степени употребляется артикль ի (ն), который, как мы думаем, не является самоцелью в том смысле, что с его помощью автор в большей степени подчеркивает свойственный народному языку диалектный элемент. Этот элемент представляет собой одну из особенностей, свойственных его языку.

Особенности синтаксической системы языка проявляются в строении предложения. Исследования показывают, что в целом Авагян остается верным конструктивным признакам предложения и сохраняет их основную закономерность. В этой связи нами исследованы разные виды и подвиды простых и сложных, односоставных и двусоставных предложений.

В прозе писателя значительное место занимают также соединенные соединительными, противительными и добавочными союзами добавочные сочетания, имеющие сочинительное значение, каждое из которых дополняет другое, выражает смежную мысль.

В четвертой главе “Сравнительный анализ рукописей” проведен сравнительный анализ рукописей, показаны изменения, осуществленные во время переиздания и переработки произведений автора. По характеру обработки произведения Авагяна были разделены нами на три группы. В первую были включены в основном те произведения, которые не переиздавались после первого издания, а следовательно, не были изменены со стороны автора. Это романы: “Завтра”, “Раскаленная земля”, “Назели Даларян” и “Удар”. Во вторую группу вошли те произведения, которые были доработаны (разные сборники рассказов были подвергнуты дополнениям и сокращениям, перестановкам частей и строк, множеству стилистических изменений). Среди них: “Зеленый шум”, “Шахре-Шад”, “Полдень”, “Человек в пустыне” и другие рассказы. Произведения последующего периода, будучи результатом более зрелого таланта, были переизданы, однако практически не были переработаны. Среди них: “Дождь пошел”, “Эта скука”, “Они ушли, оглядываясь назад”, “Сероб Лимеци ушел” и другие рассказы.

Исследование различных публикаций показало, что А. Авагян провел длительную и кропотливую работу. Особенно это отражено в рассказах, в которых описываемые события и герои, а также выражаемые чувства наиболее дороги и душевны.

В заключении даются основные выводы исследования.

SATENIK EMIL YEGHIAZARYAN
THE LANGUAGE OF ABIG AVAGYAN'S PROSE

Dissertation for the Candidate's Degree of Philological Sciences,
Specialty 10.02.01-"Armenian Language"

The defense will be held on 15 May, 2017, at 15⁰⁰, at the session of the HAC
Academic Council on Linguistics 019 in the Institute of Language after H. Acharyan
of the National Academy of Sciences RA
(address: 0015, Yerevan, Gr. Lusavorich St., 15).

SUMMARY

The prose language of Abig Avagyan, a prominent Armenian prosaist of the second half of the 20th century is studied in the dissertation. The investigation of the author's prose has been carried out and evaluated from literary-critical standpoint. The prose is considered completely and comprehensively for the first time, including the vocabulary layers, the figurative and expressive means, the morphological and syntactical realities. Apart from this, a comparison of the originals has been carried out, indicating the changes which the republished and polished creations have undergone.

The introduction speaks about some episodes of A. Avagyan's life and literary work. The complete characteristic of his prose, the language development from collection to collection are also introduced whose value is conditioned by the peculiarity of the author's artistic thinking and individual style.

Chapter One of the dissertation "**The Vocabulary of A. Avagyan's Prose**" consists of three parts. Part one is devoted to the study of the vocabulary layers and their stylistic peculiarities. The commonly used popular, dialectic, western Armenian words, archaisms and neologisms, borrowings and barbarisms are considered. Part two is devoted to the semantic groups of the vocabulary: synonyms, antonyms, homonyms and composite words. Part three examines phraseological units of the semantic, functional-stylistic significance and aesthetic value.

Chapter Two "The Expressive and Figurative Means" is devoted to the consideration of the expressive and figurative means peculiar to Avagyan's artistic speech: Figurative thinking is one of the characteristic features of Avagyan's language distinguished by a variety of figurative means and richness. Among expressive means repetition, gradation, oratorical question and oratorical exclamation, contradiction and omission give new emotions to the heroes' speech.

Chapter Three "The Grammatical Realities" is devoted to the study of the grammatical realities, morphological and syntactic peculiarities. The morphological peculiarities are mainly expressed in the grammatical categories of the noun declension, number and the article usage. Each of the mentioned categories

possesses certain stylistic expressiveness and thus becomes a means of speech stylization.

In Armenian, the grammatical category of the article usage has semantic-grammatical peculiarities formed with articles. In Avagyan's prose, the article is used as an individual and significant means of speech. Investigations show that the addition of the definite article «ն» is widely used in both the author's and the heroes' speech, which, we think, is not pointless as the author emphasizes the dialectic element peculiar to people's language. The latter is one of the characteristic features of his language.

The syntactic peculiarities are revealed in the sentence structure. Studies show that on the whole, A. Avagyan remains faithful to the structural peculiarities of the sentence and maintains their main regularities. In this case, we have considered different types and subtypes of simple and compound, one-component and two component sentences.

In the author's prose there are numerous conjunctive combinations, expressing coordinating relations combined by coordinative and adversative conjunctions, each supplementing the other.

In **Chapter Four "Comparative Analysis of the Originals"** the linguistic and stylistic expressive changes taken place in republished and polished works have been introduced. The alterations have been adjusted, polished and improved due to the author's tender observation.

According to the polishing nature, we have divided Avagyan's works into three groups. The first group includes the works which haven't been republished after the first publication; therefore have not undergone changes by the author. These are the novels "Tomorrow", "Heated Soil", "Nazeli Dalaryan", "Blow". The second group includes the works which have been supplemented (additions and curtailments, rearrangements of parts and lines, various stylistic changes made in different collections of stories). Some of these stories are "Green Noise", "Shahre-Shad", "Noon", etc. The author's later works, being a result of a more mature talent have been republished but not polished, thus for instance, the stories: "It started raining", "The Boredom", "They Left Looking Back", "Serob from Lim left", etc. This study of different publications shows that A. Avagyan has worked long and patiently at the works in which the reality and heroes, as well as the expressed feelings have been close to the author's heart.

In **conclusion**, the main findings and some inferences drawn from the research are summarized.